

րենիքի ազատութեան նախանձախնդիր Հայաստանի գառառներն է չափչփում մերթ յունաց, մերթ արաբացոց դէմ կոիւ մղելով յատկապէս կարին քաղաքում կոստանդին կայսրին հանդիպելը<sup>1</sup>:

### Ստեփան Կանայեանց.

(Եարունակելի).

### Ե. ՎԵՐՆԵՐ

Ո՞ւր է տանում հասարակութեան զարգացումը:

\* \* \*

Սակայն, թէև հարիւր միլիոնաւոր աշխատող ժողովուրդ գործում են միասին, բայց իրենք այդ բանը չեն նկատում և գեռ որ աւելի նշանաւոր է, գրանից ոչ ապահովութիւն են ստանում և ոչ էլ իսկական բարեկեցութիւն: Ի՞նչ բանից է այս ամենը այդպէս տարօրինակ գասաւորուել: Դրան շատ յայտնի պատճառներ կան:

Մեր բանւորը չիթը գնել է շուկայում, գնել է վաճառականից, նա այնաեղ միայն չիթն է տեսել և վաճառականին, բայց չէր կարող այն ամենը տեսնել, ինչ որ մենք այժմ քրքրեցինք: Չթի վրայ ոչ մի հետ ակայ այն միլիոնաւոր մարդկանց աշխատութիւնից, որոնք նրա արտադրութեան մէջ ամեն կերպ մասնակցել են, իսկ վաճառականը այդ աշխատանքի մասին ի հարկէ բերան չէ բանւում, այլ ուղղակի տառւմ է—«ապահնքը իմն է» և աշխատում է գնողից մի բան աւել պոկել, ուրեմն բանւորը պիտի ընդունէ, որ այդ այդպէս է, որ չիթը վաճառականին է պատկանում և ի հարկէ վաճառականը այդ բանւորի մասին

քիչ է հոգում և իր հետ միասին չէ աշխատել։ Ուրեմն բանը ինչումն է։ Նրա մէջ, որ ապրանքը նրան չէ պատկանում, ով արտադրել է։ Զիթը արտադրել են միլիոնաւոր բանւոր մարդիկ, բայց տիրապետել է առաջ մի կապիտալիստ—գործարանատէր, իսկ նրանից ստանում է գնողը իր փողի դիմաց, ստանում է ոչ թէ բանւոր հասարակութիւնից և այն իր աշխատանքի փոխարէն, Այդ ինչպէս պատահեց։ Ահա ինչպէս

Որ և է բան արտադրելու համար բաւական չեն ձեռներն ու բարի կամքը—կարեսր են նաև արտադրութեան այլ միջոցներ—աւաճին՝ մեքենաներ, գործիքներ, գործելու համար տեղ, շինութիւն, երկրորդ՝ ամեն տեսակ նիւթ՝ որ գործին է ծառայում, երրորդ՝ բանւորի համար ազգելու միջոց, իր այդ գործը կատարումն տալու ամբողջ ժամանակամիջոցում։ Այդ ամենը բանւոր չունի, նա—պրօլետարեա է, այսինքն մի մարդ, որը սեպհականութիւնը չունի։ Այդ բանը չունի նաև բանւոր հասարակութիւնը և նրանք ամենքը, որ միատեղ են բանում—այն է այն միշտոնաւոր բանւորները, որոնք ոչ մի ընդհանուր սեպհականութիւն չունեն, ինչպէս և արտադրելու միջոցներ։ Բայց ով ունի այդ ամենը։ Առանձին հարուստ մարդիկ, որոնք կապիտալիստներ են ասւում։ Դրանք կամ ուղղակի միջոց ունեն արտադրելու, կամ փող՝ որի միջոցաւ շատ հեշտութեամբ կարող են ուրիշ կապիտալիստից այդ ամենը գնել։

Բայց կապիտալիստները որտեղից արտադրելու միջոցները ձեռք բերին։ Այդ ամենը շատ երկար պատճութիւն է, պէտք է մի մի պատմէինք թէ ինչպէս հին ժամանակներում նշանաւոր մարդիկ ստրուկներին ու ճորտերին շահագործում էին ու նրանց ձրի աշխատանքից հարստութիւն դիզում, պատմէինք թէ ինչպէս զանազան պաշտօնեաններ հարկերով ու կաշառներով թալանում էին ժողովրդին, իսկ վաշխառուները խմում էին այն ամենքի արինը, որոնք ընկնում էին նրանց սուր ճանկերը, ինչպէս տիրապետող ցեղերը ամենքին, որոնց հնար ունէին

կողոպտում էին, իսկ ճարպիկ առևտրականները անկիրթ վայրենիներին խաբում, աննշան հասարակ զարդարանքները, անպէտք բաները ուկու աւազի, թանկագին մորթիների և ուրիշ հազուագիւտ ապրանքների փոխանակելով։ Այս ամենը ինչ որ այդ ձեռվ հաւաքուել է, նրանցից անցել է ուրիշներին կամ իրենց ժառանգներին խարեւբայութեան միջոցաւ կամ վաշխառութեան շնորհիւ։ Նատարիւն և կեզտ կտեսնէինք մենք, եթէ ամեն մի կապիտալի վրայ նրա ծագման հետքերը մնացած լինէին։ Միայն այս է ճշմարիտ, որ աշխատանքով անկարելի է կապիտալ կազմել և եթէ այդպիսի մի գերբնտկան մարդ լինէր, որ կարողանար այդ անել, այն ժամանակ նրա ժառանգները առանց աշխատելու կապիտալ ձեռք կը երէին։ Ոսել է կապիտալը — աշխատանքով ձեռք բերած հարստութիւն չէ. բայց մեր ժամանակներում առանց կապիտալի աշխատելու համար միջոց չկայ, կապիտալիստը վարձում է բանւորներ, այսինքն նրանց միջոց, օրավարձ է տալիս, որ գործի ժամանակ ապրեն, տալիս է և գործիքներ, նիւթ, որ բանեն և գրա համար նա վերցնում է ամենը, ինչ որ մշակները արտադրում են և ծախում է շուկայում, ինչպէս իր սեպհական ապրանքը, որ շահ ստանայ և իր կապիտալը մեծացնի։ Այսպիսով այն, ինչ որ արտադրում է մէկը, դառնում է սեպհականութիւն մի ուրիշին և հէնց գրա վրայ է հիմնուած ներկայ ամրող հասարակական կարգը։ Ոչ մի ապրանքի վրայ չէ երեւում ով է նրա վրայ աշխատել, իսկ կապիտալիստը նրան ծախում է և ասում. — «այս իմն է», նրանց էլ մարդիկ չեն տեսնում, որ նրանք աշխատում են միասին և ընդհանուր աշխատութեամբ բոլոր ապրանքները արտադրում։ Դրա համար էլ ներկայ հասարակութեան մէջ ոչ մի մարդ ապահովուած չէ, որովհետեւ ինչ որ իրեն պէտք է, նա ոչ թէ հասարակութիւնից է ստանում, այլ կապիտալիստից, որոնք ապրանքը տալիս են միայն փողով և մի միայն շահուելու նպատակաւ. նշանակում է պէտք է բաւականին փող ունենալ, որ նրանց վճարուի իրենց ուղած շահեկան գնով,

բայց կարող է միշտ և ամեն մէկը բաւականաչափ փող ունենալ:

Ճշմարիտ է, որ արտադրելու միջոց ոչ միայն կապիտալիստները ունեն, այլ և ունեն արհեստաւորներն ու գիւղացիք, բայց դրանից նրանց օգուտ չկայ. թէ գիւղականը և թէ արհեստաւորը իր գործիքներն ու նիւթերը ոչ թէ հասարակութիւնից է սահանում, այլ գնում է շուշ կայում և այն փողով։ Դարձեալ—պէտք է բաւականաչափ փող ունենալ. բայց արդեօք միշտ յաջողւում է այդ։ Որպէս զի գիւղացին փող ձեռք բերի, պարտաւոր է իր ապրանքը ծախելու, բայց արդեօք նրան շուկայում այն գինը կտան, ինչ որ նա պահանջում է, որպէս զի հնար ունենայ կարգին ապրելու և ասանց մաշուելու աշխատեալու։ Այդ նրանից չէ կախուած և յաճախ գուրս է գալիս, որ նրան իր ուզած գինը չեն տալիս։ Այն ժամանակ մնում է նրան ջրից հանած ձկան պէս թրփրտալ, էլ ուր է այս տեղ ապահովութիւնը։ Նրա դրութիւնը ոչ միայն օրավար ձով ապրողի դրութիւնից լաւ չէ, այլ և շատ անգամ—աւելի վատթար։

Ինչպէս փոխել այդ ամենը, ի՞նչպէս իրական ապահովութեան հասնել և գրա հետ իսկական ազատութեան։ Որովհետեւ միմիայն ապահովութեան ժամանակն են մարդիկ ազատ զարգանում, և ապրուսի համար իրենց ազատութիւնը չեն տալիս ոչ ամբողջօվին—ինչպէս ստրուկներ և ոչ մասնակի ինչպէս բանուորներ։ Մի ճանապարհ միայն կայ—պէտք է ինչ որ հասարակական աշխատանքով է արուած, հասարակութեան էլ նա պատկանի, որպէս զի բանւորը իր ապրուսի և աշխատութեան միջոցները ոչ թէ կապիտալիստից ստանայ, այլ հասարակութիւնից. ապա ուրեմն հորկաւոր է, որ արտադրութեան բոլոր միջոցները հասարակութեան սեպհականութիւնը դառնան։ Հենց այդ է սոցիալիզմի վարդապետութիւնը։

Ահա ինչ են ցանկանում կողեկտիւիստները. մենք չենք ցանկանում, որ կտափառավատները գոյութիւն ունենան, որոնք ամեն բանին տիրում են, թէի ամեննին

չեն աշխատել և ոչ էլ պրոկտոարեա, որոնք սեպհականութիւն չունեն ինչպէս էլ որ նրանք չաշխատէին, Մենք ցանկանում ենք, որ ամբողջ հասարակութիւնը ընկերներ լից կազմուած լինէր, միասին աշխատէին և միասին ամեն բանի աէրը լինէին։ Ամեն բան, ինչ որ կարեոր է արտադրելու համար, այն է՝ ամբողջ հողը, բոլոր գործիքներն ու մեքենաները, բոլոր աշխատանքի նիւթը—այդ բոլոր պէտք է ամենին պատկանի, այսինքն հասարակութեան և ոչ թէ առանձին մարդոց, այն է կապիտալիստների, որոնք օգտառում են գրանով ուրիշներին շահագործելու համար։ Ամեն մէկը պարտաւոր է հասարակութեան աշխատող անդամ՝ լինի, ուրիշի աշխատանքով ապրող ոչ մի պարագիտ չպէտք է լինի։ Ամեն մի մարդի հասարակութիւնը միջոց պիտի տայ թէ ապրելու և թէ աշխատանքի, որպէս նա կարողանայ ապրել, զարգանալ և աշխատել և կեանք վայելել։ Ամեն մի անհատից հասարակութիւնը կարող է պահանջել այնքան աշխատութիւն, որքան հարակաւոր է որ հասարակութիւնը կարողանայ իր գոյութիւնը պահպանել և իր պյտերը զարգացնել, եւ հասկանալի է այդ ժամանակ պարտաւորիչ աշխատանք ամէն մէկից աւելի քիչ կպահանջուի, քան պահանջում են այժմեան կապիտալիստները—աշխատողներ շատ կլինեն, ինչի, որ ոչ պարագիտներ կլինեն և ոչ անդործներ, աւելորդ ծախքեր չեն լինել հարուստների ու մեծամեծների շքեղութեանց համար, ամեն մէկի ուժը աւելի կատարեալ կզարդանայ, քան այժմս է և ամեն մէկի աշխատութիւնը աւելի յաջող արդիւնաւէտ կլինի։ Միարան գործելուց՝ հասարակութիւնը իր ահագին աւժերով կարող կլինի այնպիսի մեքենաներ շինել, որոնց մասին չեն էլ կարող երեակայել ամենահարուստ կապիտալիստները, հէնց մեքենաների կատարելագործութիւնը առհասարակ աւելի արտգ կդնայ, քան այժմ, ինչու որ ուսումը ամենքին մատչելի կլինի և ամեն մէկը հնարաւորութիւն կունենայ սովորել իր ցանկացած քանը։ Այսպիսով ընդհանուր բարօրութեան և զարգացման համար հասարակութեան ամեն մի անդամից

կպահանջուի ոչ թէ 11—12 ժամ՝ աշխատել, որ այժմ  
կապիտալիստների համար մեզանում բանում են, և ոչ  
10—9 ժամ ինչպէս այժմ՝ Ամերիկայում և Անգղիայում  
է, մինչև անդամ և ոչ 8 ժամ, ինչպէս Աւստրալիա և  
Նոր Զելանդիա է, այլ կարելի է սկզբներում 5—6 ժամ,  
իսկ յետոյ աւելի քիչ. Միաժամանակ հասարակութիւնն էլ  
պիտի աշխատէ, որ ամէն մէկը իր սրտի ուղած գործը  
անէ, որչափ այդ հնարաւոր է և այդ ժամանակ պարտա-  
ւորիչ գործը ինքը բոլորովին ազատակամ կթուի: Հաս-  
կանալի է, որ այդ ժամանակ մարդը իսկապէս իրեն ազատ  
կզայ, գիտակցելով, ոչ ոպարտաւորիչ գործի համար իր  
դրած աշխատութիւնը նա տալիս է յօդուտ ամբողջ հա-  
սարակութեան, որը եղբայրաբար, ընկերաբար իր համար  
հօգում է. նա բացի այդ բաւական ազատ ժամանակ կու-  
նենայ իր զարգացման համար, իր ազատ աշխատանքի և  
կեանքի բաւականութեան, և նրա վրայ ոչ իշխանութիւն  
կլինի և ոչ տէր, այլ իրեն հաւասար ընկեր, որովհետեւ  
այն անձինք էլ, որոնց հասարակութիւնը կընտրէ իրրե-  
զանազան գործերի ու տնտեսութեան կարգադրիչներ,  
մինչև անդամ դրանք էլ չեն գաղաքել նրանց համահա-  
ւասար ընկեր հաշուելու իրենց: Այդտեղ ժաղովուրդը  
այլ ևս տէրերի հետ կռիւ չի մղել, պրոլետարիան—  
կապիտալիստների հետ, հասարակութիւնը կդառնայ մի  
ազատ ընկերական միութիւն ազատ կեանքի ու ազատ  
զարգացման համար: Այս է այն բարձր նպատակը, որ  
մեր օրերում դրել է աշխատաւոր ու մաքառող մարդ-  
կութիւնը—սօցիալական գաղափարը: Բայց սօցիալիզմին  
միանգամից հասնել անկարելի է. որպէս զի այդ մեծ  
գործը իրագործուի, սոցիալիստները երկու բան պիտի  
ունենան—առաջին՝ ոյժ, որ կարողանան կապիտալիստ-  
ներից ու հողատէրերից խլել արտադրելու բոլոր միջոցնե-  
րը և հասարակաց սեպհականութիւն գարձնեն և երկ-  
րորդ՝ կարողութիւն և փորձաւութիւն, որ իսկոյն դրանից  
յետոյ կանոնաւոր ու խելացի կերպով կարգադրեն հասա-  
րակական արդինագործութիւնները և հէնց սկզբէց ար-

դարացի կերպով ընդհանուր աշխատանքի արտադրութիւնները բաժանեն։ Իսկ որտեղից վերցնել՝ այդ ոյժը և այդ կարողութիւնը Ոյժը այն ժամանակ կստացուի, երբ բոլոր աշխատող ժողովուրդը կըմբռնէ, թէ իրեն ինչ է հարկաւոր և միաբան թէ թէի կտան բոլոր շահագործողների և ամեն տեսակ շահագործութեան դէմ մաքառելու։ Այդ բանը ամենից առաջ կարող են և պարտաւոր են հասկանալ և միանալ վարձկան պրօլետարիա—բանւորները, չէ որ դրանք ամենքից լաւ գիտեն փորձով, թէ ինչ բան է շահագործութիւնը և միւսներից լաւ գիտեն փորձով, թէ ընդհանուր գործի մէջ ընկերական օդնութիւնը ինչ մեծ նշանակութիւն ունի։ Իսկ երբ նրանք միանան և եռանդով սոցիալիզմի կոփուը մղեն, նրանց շուտով կմիանան և արշեատաւորները և գիւղացիք, որոնք հասկացել են ազատութեան և ամենքի միանալու բոլոր առաւելութիւնները, կմիանան կրթուած զանազան պաշտօնեանները և ամեն բանիմաց, որոնցից արդէն շատ մաքառողներ են դուրս եկած։ Իսկ թէ կարողութիւն կամ փորձ կունենան սոցիալական հասարակութիւնը կազմակերպելու, դրան պրօլետարիան ձեռք կրերէ իրեն գրութիւնը բարուքելու համար կապիտալի դէմ մղած անընդհատ կռւով։ Առայժմ կարելի չէ բոլորովին վերացնել շահագործութիւնը, պէտք է որչափ կարելի է թուլացնել նրան ու սեղմել, պէտք է ձեռնարկողներից զիջումներ ձեռք բերել, պէտք է կեանքի աւելի տանելի պայմանների համար կռուել. որ լաւ ոյժ հաւաքուի. դրա համար բանւորները պիտի միանան, դաշնակցութիւն կազմեն և ամեն միջոց գործ գնեն կապիտալիստներին ստիպելու օրավարձի պայմանները լաւացընելու և տէրութեան՝ բանւորի օգտին գործարանների վերաբերեալ օրէնքներ սահմանելու։ Այդպիսի անընդհատ կոփուների մէջ բանւորները կմիանան մի ահագին ոյժ կը կազմեն և միաժամանակ կհմտանան ու կսովորեն ընդհանուր գործը աւելի խելացի ու կանոնաւոր վարելու։ Այն ժամանակ նրանք կարող կլինեն, հէնց որ հնարաւոր եղաւ, և հասարակական արդիւնագործութիւնները կազմակեր-

պելու, կարգի դնելու։ Այդ գործին մինչև անգամ՝ իրենք կապիտալիստները ևս կօգնեն, թէև ակամայ, ի հարկէ։ Նրանց մէջ էլ խիստ մրցութիւն կայ, ամեն մէկը աշխատում է միւսներին հարուածել ու շուկայից գուրս քշել։ Այդ մրցման մէջ աւելի զօրեղները թոյլերին յաղթելով, նրանց նիւթականապէս քարուքանդ են անում, նրանց կապիտալը և նրանց ձեռնարկութիւնները իրենց ձեռքը ձգում։ Այսպէս առաջ են գալիս աւելի լայն ու ընդարձակ ձեռնարկութիւններ, որոնց մասին ոչ ոք չէր էլ երազում, և այդպիսիների ձեռնարկութիւնները թւով քիչ են լինում քան առաջ։ Նոյնը ստացւում է և այն ժամանակ, երբ կապիտալիստները ցանկանում են մրցութիւնից և նրան հետեղ բիսկերից ազատուել և դրա համար միացնում են իրենց կապիտալները—կազմում են ամեն տեսակ ընկերութիւններ բաժինով կամ ակցիայով, կազմում են և գաշնակցութիւններ, որ ընդհանուր ուժերով տանեն արդիւնագործութիւնը և ապրանքների վաճառումը։

Ամեն մի այդպիսի ընկերութիւն և ամեն մի այդպիսի գաշնակցութիւն (սինդիկատ) սկսում է մի ահագին ձեռնարկութիւն և այդ ձեռնարկութիւնները թւով քիչ բայց աւելի մեծ ծառալով են լինում։ Սրանից հետեւում է, որ այս ու այն ձեռնարկութիւնների մէջ բանառները աւելի ու աւելի են խմբովին միանում—հարիւրներով, հազարներով մինչև անգամ տասնեակ հազարներով։ Այդ բանը աւելի է վարժեցնում բանւորներին միասին զգալու և միասին գործելու և առհասարակ օգնումէ նրանց կըթուել և ընդհանուր բանւորութեան գործի համար միանալ։ Այդտեղ բանւորները սոցիալիզմի համար կոիւ մղելուց շատ հեշտութեամբ են ձեռք բերում հարկաւոր ոյժը և կարողութիւնը, նացի այդ գործի մի ուրիշ դժուարութիւնն էլ է փոքրանում, ձեռնարկութիւնների թիւը քիչ լինելով, բայց ծառալով մեծ, աշխատաւոր ժողովուրդը ի հարկէ աւելի հեշտութիւնով է տիրապետում փոքրաթիւ ընդարձակ ձեռնարկութիւններին, քան այդկարող էր բազմաթիւ մանր ձեռնարկութիւններին տիրա-

պետելուց։ Դուքս է դալիս, որ կապիտալիստները անգամ շահագործութեան և իրենց շահերի համար մտածելով, ակամայից սոցիալական կազմի համար հող են պատրաստում, թէև այդ բանը իրենց համար, հասկանալի է, որ շատ էլ ախորժելի չէ։

Աշխարհիս առաջադէմ երկրներում բանւորները դաշնակցութիւնների ու իրենց շահերի համար մզած կուների միջոցաւ մեծ ոյժ և մեծ փորձառութիւն են ձեռք բերել և հաստատ քայլելով գնում են դէպի սոցիալիզմը, իսկ մեզանում դեռ ևս այդ չկայ։ Մեզանում չեն թողնում բանւորները միանան և իրենց շահերի համար մաքառն։ Մեզանում չեն թոյլադրում ոչ բանւորական դաշնակցութիւն կազմելը, ոչ բանւորներին իրենց շահերի համար ազատօրէն քննադատութիւնը և ոչ այդ շահերի համար մաքառումը, մեզանում չկայ քաղաքական աղատութիւն և քանի որ այդ այդպէս է, անկարելի է սոցիալիզմի համար իսկական ու լայն կոփւ մղել, անկարելի է և ընդհանապէս կապիտալի դէմ յաջող կոփւ մղել ինչպէս և բանւորների շահերի և կեանքի աւելի լաւ պայմանների համար մաքառել։

Այդ բանը բանւորը պիտի հասկանայ և իւրացնէ։ Քաղաքական ազատութեան, բայցի բանւորը, ձգտում են և Խուսաստանի բազմացեղ հասարակութեան և միւս դասակարգերը, բայց քաղաքական ազատութիւնը աւելի բանւոր դասին է հարկաւոր։ Միւս դասակարգերը գլխաւորապէս իրենց համար քաղաքական ազատութեան մի մասը ստանալուն էլ համաձայն են, բայց պրօլետարիատը իսկական կատարեալ քաղաքական ազատութեան պէտք ունի։

#### Փռադրեց Ա. Ա. Մելիք Շահնազարեան

(Նարու Ռակելի)։

